



ՆԱԻՐԻ



נאירי



№ 580439172 'מס

Պետախ-Տիկվայի իսրայելահայերի «Նաիրի» միություն - ת"ת איגוד ארמנים ישראלים בפ"ת נאירי
Общество армян „Наири“ г.Петах-Тиквы Nairi - Union of armenians in Petah-Tikwa

Պետախ Տիկվա, 28/05/2013

Եվրոպական հետաքննությունների միություն
Եվրատեսիլ երգի մրցույթ
Եվրատեսիլ երգի մրցույթի
Գործադիր տնօրեն
Պարոն Զոն Օլա Սանդին

Պետախ-Տիկվայի իսրայելահայերի միության
Նախագահ Արտյոմ Չերնամորյանից

Հարգելի պարոն Սանդ,

Ձեզ եմ գրում Պետախ-Տիկվա քաղաքի իսրայելահայերի «Նաիրի» միության անունից՝ արտահայտելու մեր անհանգստությունն ու հիասթափությունը: Պետախ-Տիկվայի «Նաիրի» միությունը միավորում է իսրայելահայերին և Հայաստանի հրեաներին՝ փորձելով ավելի լավ հարաբերություններ հաստատել հայերի և հրեաների միջև, միևնույն ժամանակ աշխատելով հակասեմիտականության և էթնիկ խտրականության դեմ:

Մենք հակված ենք մտածելու, որ Եվրատեսիլ երգի մրցույթը դարձել է քաղաքական ասպարեզ որոշ երկրների համար, որոնք ցանկանում են մտնել եվրոպական ընտանիքի մեջ և հնարավոր ամեն ինչ անում են ձայներ գնելու և հրապարակայնորեն լիբերալ տեսակետ ցուցադրելու համար: Ինչևէ, միևնույն ժամանակ այդ երկրները փորձում են թաքցնել կաշառակերությունը և իրենց երկրի ներսում գործող բռնապետերին:

Այն, ինչ տեղի ունեցավ Իսրայելում 2013թ. Եվրատեսիլ երգի մրցույթի եզրափակչում, անհավատալի է և անմոռանալի: Մենք համոզված ենք, որ Իսրայելի ամբողջ հայ համայնքը, ինչպես նաև Հայաստանից Իսրայել տեղափոխված հրեաները քվեարկել են հայ մասնակցի՝ «Դորիանս» ռոք խմբի և նրանց «Միայնակ մոլորակ» երգի օգտին: Ինչևէ, անբացատրելիորեն Հայաստանը ոչ մի ձայն չստացավ Իսրայելից: Մա հիասթափեցնող էր և տեխնիկապես անհնարին: 2006թ., օրինակ, Հայաստանը 8 միավոր ստացավ Իսրայելից, 2007-ին՝ 5 միավոր և 2008-ին՝ 8 միավոր: Աղբբեջանը

նույն տարվա մրցույթին Իսրայելից ստացավ ընդամենը 3 միավոր: 2009-ին Իսրայելը 8 միավոր տվեց Հայաստանին, 6 միավոր՝ Ադրբեջանին, իսկ 2010-ին հայ երգչուհի Եվա Ռիվասն իր «Ծիրանի կորիզ» երգով ստացավ 12 միավոր, Ադրբեջանն ընդամենը՝ 6 միավոր:

Ի հակադրություն այս տվյալների, հայկական «Դորիանս» ռոք խումբն այս տարի նույնիսկ 1 միավոր չստացավ Իսրայելից, իսկ Ադրբեջանը ստացավ 12 միավոր: Երուսաղեմի, հայկական թաղամասերի և Իսրայելի կենտրոնական, հյուսիսային ու հարավային մասերի հայերը քվեարկել էին Հայաստանի օգտին, սակայն այդ ձայների ոչ մի ապացույց ակնհայտ չեղավ հրապարակված արդյունքներում:

Հայկական խմբի երգի երաժշտությունը գրվել էր հայտնի կոմպոզիտոր Տոնի Յոմմիի կողմից: CNN հեռուստաընկերությունն եզրափակիչ քվեարկության օրը տեսանյութ ներկայացրեց հայ մասնակցի մասին՝ շեշտելով, որ Հայաստանը մեծ հնարավորություն ունի հայտնվելու նվազագույնը 5-րդ հորիզոնականում:

Մրցույթին նախորդել էր Ադրբեջանի Արտգործնախարար Էլդար Մամեդյարովի այցն Իսրայել: Մի քանի քաղաքական հանդիպումներից հետո հայտարարվեց, որ Իսրայելը ոչ մի միավոր չի հանձնել Հայաստանին՝ հայտնի երաժշտական մրցույթում, որը համարվում էր ոչ քաղաքական: Ցավոք, մենք չենք կարող ապացուցել, որ Ադրբեջանը բանակցել է Իսրայելի պրոֆեսիոնալ ժյուրիի հետ, սակայն արդյունքներն ինքնին խոսում են:

Եթե մրցույթն արդար լիներ, մենք առավել քան ուրախ կլինեինք շնորհակալություն հայտնել Ձեզ հետաքրքիր և ոչ քաղաքական մրցույթի համար: Մեր կազմակերպության համար ակնհայտ է, որ Իսրայելը հայերի հազարավոր ձայները վաճառել է իր նավթային գործընկեր Ադրբեջանին: Մենք պահանջում ենք մեր ձայները:

Բարձր ենք գնահատում Ձեր ուշադրությունն այս հարցի նկատմամբ:

Հարգանքներով

Պետախ-Տիկվայի իսրայելահայերի «Նաիրի» միության հիմնադիր կազմ

Արտյոն Չերնամոյսյան

Պետախ-Տիկվայի իսրայելահայերի «Նաիրի» միության նախագահ



ՆԱԻՐԻ NAIRI
נאירי - איגוד ארמנים ישראלים
בפתח-תקווה (ע"ר)
עמותה מס' 580439172

Կրկնօրինակը՝ գործադիր տնօրենի օգնական Ստեֆանի Քաֆլիշին

Nairi - Union of armenians in Petah-Tikwa
Aviel str.2, apt. 37, Petah-Tikwa, Israel, Tel: +972-3-904-00-83, Fax: +972-1553-904-00-83
Nairi_Israel@walla.com, www.nairi.do.am